

փրկարար նշանակութիւն ունի մարդու նամանաւանդ տանջւած շարշարւած մարդու կեանքում: Հեղինակը ստիպւն, որ հետեւել է իւր հերոսների կեանքին և դրութեան, մի ալնպէս վախճան է տալիս իւր հերոսուհի Աննային, որով ուղղում է ասել թէ մերնիւթական աշխարհում, ուր ուտել, խմել է հարկաւոր, ուր ձեռքի աշխատանք է հարկաւոր, ուր մարդու կազմւածքը ունի իւր բնական բաղմատեսակ պահանջները, մարդկային ոգին անկարող է մխիթարել և պահպանւել միայն քարոզներով: Աննան, չը նախելով իւր որոշումին՝ ամուսնել իւր վիշտը աղօթքներով և լաւ ապագայի լուսով—անկարող է համարում շարունակել իւր կեանքը և թունաւորւում է:

Նամակները գրւած են մեծ զգացմունքով, թէև մէջը կա խառն նաև սենտիմենտալիզմ: Աւաջին երեք նամակները փոքր ինչ չեն համապատասխանում վէպիկի ամբողջութեան: Այդ առաջին գլուխները ուրիշ բովանդակութեան գրւածքի սկիզբ կարող էին լինել, և ընթերցողը իսկապէս սպասում է ուրիշ տեսակ շարունակութեան, քան զըտնում է գրքուկի մէջ: Եւ հէնց այդ

սկիզբն է, որ համեմատաբար հետաքրքրական չէ ալն աստիճան, որ գիրքը կարդալ սկսողը նորան ձեռքից չը զցի:

Մի քանի հոգեբանական գծեր շատ գեղեցիկ են դուրս բերւած և կրում են իրանց վերալ խնամքով արած դիտողութեան կնիք: Լաւ են Ե, Զ, Ը, Ժ նամակները:

Դրւածքի մէջ կան մի քանի ձգձգած տեղեր, անբնական գիրքեր: Արշակ Սարուխանցի արբեցողութիւնը շատ էլ լատուկ չէ մեր կեանքին: Գրիգոր Սարուխանը գիմնադիտ է և ունի 23—24 տարի հասակ, որ սակաւ է պատահում ալժմեան ժամանակները:

Աննա Սարուխանը կրում է իւր վերալ լաւ գրական օրինակների ուսումնասիրութեան հետքեր: Հեղինակի տւածը վիպական և գեղարւեստական երկերի համար լաւ սկիզբ կարող է համարւել, եթէ հեղինակը իսկապէս նւիրել է իրան գրականութեան ալդ ճիւղի մշակութեան: Թէև վէպիկը չէ գործում հասուն գրւածքի տպաւորութիւն, բայց իւր մէջ պարունակում է լաւաջադիմելու ընդունակութեան ապացոյցներ:

Ա. Քլ.

ՍԱՐԿԱԼԱԳ: Ս.-Պետերբուրգ, տպարան Սկորոխոգովի. 1890 թ.
8-ծալ. 71 երես. տառ № 12. գինն է 5 կոպէկ:

Պատմական-կենսագրական բովանդակութիւն ունեցող գրքերը միշտ մի առանձին հետաքրքրու-

թեամբ է կարդում հասարակ ժողովուրդը. ալդ պատճառով, ովքեր հաւատում են թէ ժողովուրդը կարելի

է բարոյապէս կրթել զբերակով, պէտք է մի առանձին ուշք դարձնեն ալս տեսակ բովանդակութիւն ունեցող գրքերի նրատարակութեան վերալ:

Այս գրքովկում պատմում է Ռուզարիայի նորագոյն պատմութեան ամենափալուն հերոսներից մէկի՝ սարկաւազ Լեւկու կեանքի և գործունէութեան մասին: Բաղարական զօրաւոր կազմակերպութիւն տուող-

ներից առաջիններն էին Լեւկին և Լիւբէն Կարաւելովը. նոցա ուսանելի գործունէութեան հետ բաւական լաւ ծանօթացնում է ալս զրաժքը:

Այս համարում բերած Պետերբուրգի հինգ նրատարակութիւնների մէջ ամենանշանաւորն է «Սարկաւազը»:

Լ. Ս.

«ՀԱՋԻ-ԴԻՄԻՏՐ» ու ՍՏԵՓԱՆ ԿԱՐԱՋԱՆ: Ս.-Պետերբուրգ. տպարան Սիօ-բոխոշովի, 1890 թ. 8-աժալ 32 երես. տառ № 12, գինն է 3 կոպ.:

Յալտնի քաղաքական պալմաններում մի աղջի մէջ լառաջ ևն զալիս առանձին տեսակ աւազակներ, որոնք մղում են կատաղի կռիւ թշնամիների հետ: Բուլղարիայում Հաջի-Դիմիտրին և Ստեփան Կարաջան ալդ տեսակ աւազակների՝ գալղուկների՝ առաջին պարագլուխներից էին. նոցա քաջագործութիւնները և հերոսական մահը թուրքերի դէմ վարած կռիւներում գարձրել են ալդ անձնաւորութիւնները բուլղար ժողովրդի համար պաշտելի:

Գրքովկում գործ է ածւում «կառավարութիւնի, աղատութիւնի, օգնութիւնի» ձևը: Լեզուն ժողովրդականացնելու համար պէտք է, կար-

ծում ենք, ուշք դարձնել նախադասութիւնների պարզ կազմութեան և խօսքերի ընտրութեան վրայ և ոչ գրական. լեզուի ծումելը Ուրիշ խնդիր է եթէ ամբողջ գրութիւնը մի որ և է ժողովրդական բարբառով լինի պատմած: Նոյն իսկ նպատակաւարմար կը լինէր օրինակ մշեցիներից բարբառով ալս երկու գրքովկների նրատարակութիւնը, բայց երբ մի բան ժողովրդի համար պատմում է գրական լեզուով, ցանկալի է ալգ լեզուի մաքրութիւնը և կանոնաւորութիւնը ըստ կարելոյն պահպանած տեսնել:

Լ. Ս.